ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

Կ-029³-17.09.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2002 թվականի հունիսի 4-ի ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «տուժանքները» բառը փոխարինել «պատասխանատվության միջոցները» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 5.1 գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Գ Լ ՈՒ Խ 5.1**

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ»

Հոդված 3. Օրենսգրքի 47.1-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 47.1. Կարգավորող հանձնաժողովի կողմից կիրառվող պատասխանատվությունը

1. Կարգավորող հանձնաժողովը լիցենզավորված անձանց կողմից սույն օրենսգրքի, Կարգավորող հանձնաժողովի իրավական ակտերի պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում իրավասու է կիրառել սույն

օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցներ, վերականգնել մինչև խախտումը եղած դրությունը, կատարել դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալ դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով սահմանված առանձնահատկությունները: Լիցենզավորված անձանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցներն են՝

1) նախազգուշացում.

2) տուգանք.

3) լիցենզիայի գործողության կասեցում.

4) լիցենզիայի գործողության դադարեցում:»:

Հոդված 4. Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետով.

«9) խոցելի սպառողներ լինելու հանգամանքով պայմանավորված սակագների տարբերակումը:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. ~~Հայաստանի Հանրապետության~~ 2002 թվականի հունիսի 4-ի~~ն ընդունված №ՀՕ-373-Ն~~ ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «տուժանքները» բառը փոխարինել «պատասխանատվության միջոցները» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 5.1 գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գ Լ ՈՒ Խ 5.1

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ»

Հոդված 3. Օրենսգրքի 47.1-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 47.1. Կարգավորող հանձնաժողովի կողմից կիրառվող պատասխանատվությունը

1. Կարգավորող հանձնաժողովը լիցենզավորված անձանց կողմից սույն օրենսգրքի, Կարգավորող հանձնաժողովի իրավական ակտերի պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում իրավասու է կիրառել սույն օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցներ, վերականգնել մինչև խախտումը եղած դրությունը, կատարել դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալ դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝

հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով սահմանված առանձնահատկությունները: Լիցենզավորված անձանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցներն են՝

1) նախազգուշացում.

2) տուգանք.

3) լիցենզիայի գործողության կասեցում.

4) լիցենզիայի գործողության դադարեցում:»:

Հոդված 4. Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետով.

«9) խոցելի սպառողներ լինելու հանգամանքով պայմանավորված սակագների տարբերակումը:»:

Հոդված 45. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱԺ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-029[3] -17.09.2021-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	***ՀՀ կառավարություն***	**«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ**	Առաջարկվում է Ջրային օրենսգրքի 79-րդ հոդվածով ամրագրված՝ սակագների ձևավորման սկզբունքներում «Էներգետկայի մասին» օրենքի համանմանությամբ ավելացնել խոցելի սպառողներ լինելու հանգամանքով պայմանավորված սակագների տարբերակման սկզբունքը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	***ՀՀ կառավարություն***	**«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»**	«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի անվանման լրիվ հիշատակումն	Ընդունվել է:	Ընդունվել է:

		օրենքի նախագծի 1-ին հոդված	առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին:		